«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»
պետական հիմնարկ
"Environmental project implementation unit"
state institution
"Бюро по реализации экологических программ"
государственное учреждение

0005, ք. Երևան, Տիգրան Մեծ 65Ա
65 A. Tigran Mets Ave., Yerevan, 0005, Armenia
0005, Пр. Тиграна Меца 65 А, Ереван, Армения
☎(+ 37410)651-631
http://www.epiu.am/
Էլ.փոստ /E-mail/ эл. почта info@cep.am

№ 1-06/27Ա/198

«02» ապրիլի 2025թ.

<<ՊՐՈ ՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ի
տնօրեն Ս.Ռուբենյանին

<<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի և << ՊՐՈ ՍՏՐՈՅ >> ՍՊԸ-ի միջև 20.02.2025թ. կնքված ՀՀ-ԲԾ-ԳՀ-ԱՊՁԲ-25/9 ծածկագրով պայմանագրի համաձայն պետք է մատակարարվեր Հասարակական զուգարան: Պայմանագրի գնման ժամանակացույցով ապրանքի մատակարարման վերջնաժամկետը սահմանվել էր 2025 թվականի մարտի 20-ը: Սակայն Ձեր ընկերությունը այն չի մատակարարել:

Հիմք ընդունելով պայմանգրի 2.1.7.1 կետի բ ենթակետը <<Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը միակողմանի լուծում է պայմանագիրը:

Համաձայն ընթացակարգի հրավերի 8.14-րդ կետի

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասունօրյա

Scanned with CamScanner

ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ամփոփելով վերոգրայլը՝ Ձեզ է առաջարկվում վճարել պայմանագրի ապահովումը՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով, որը կկազմի 84 000 դրամ և որակավորման ապահովումը՝ պայմանագրի գնի 15 տոկոսի չափով, որը կկազմի 126 000 դրամ: Տվյալ վճարումների արդյունքում Ձեր ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝

<<ԲԾԻԳ>> ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գնոմեն Եսոյան